Ամերիաբանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և «Poputi.am»-ի համատեղ արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող **Poputi** հավելվածի ՀՀ քաղաքացի հանդիսացող այն օգտատերերը (այսուհետ՝ Օգտատեր), որոնք մինչև 2026թ. սեպտեմբերի 3-ը ներառյալ (այսուհետ՝ Արշավի գործողություն) կանցնեն Poputi հավելվածում տեղադրված հղմամբ, հեռավար եղանակով կդառնան Բանկի հաճախորդ, կբացեն հաշիվ և կպատվիրեն Mastercard Standard տեսակի քարտ, իրենց «Poputi» հավելվածի օգտահաշվին կստանան 1500 միավոր: Բանկի կողմից թողարկված վճարային քարտը «Poputi» հավելվածում ուղղորդող օգտահաշվին կցելուց և այդ քարտով կատարված վճարմամբ առաջին երթը ամրագրելուց հետո տվյալ օգտահաշվին արշավի ավարտից 15 օր անց կփոխանցվի լրացուցիչ 1500 ՀՀ դրամ «Poputi» հավելվածի իր հաշվին:

Արշավի պայմանները կիրառելի են, եթե պահպանված են ստորև պահանջները.

- Օգտատերը պետք է Բանկի հաճախորդ դառնա և պատվիրի Mastercard Standard տեսակի քարտ մինչև 2026թ. սեպտեմբերի 3-ը ներառյալ,
- Միավորների տրամադրման պահին Օգտատերը պետք է հանդիսանա Բանկի հաշվետեր հաճախորդ,
- Օգտատերը 2025 թվականի հունիսի 1-ից սկսած, ինչպես նաև Արշավի գործողության ընթացքում չի դադարեցրել և վերսկսել Բանկի հետ գործարար հարաբերությունները: